ՆՈՆՆԱ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

# ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ Մ.Թ.Ա. III-I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ԿՈԹՈՂԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԾԻՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

Գորիսի տարածաշրջանը՝ որպես բնակավայր, մարդկությանը հայտնի է եղել դեռևս վաղ ժամանակներից: Այս մասին են վկայում տարածաշրջանից հայտնաբերված մ.թ.ա. III-I հազարամյակներին վերաբերող պատմահնագիտական նյութերն ու հուշարձանները:

Գորիսի տարածաշրջանի վերոնշյալ ժամանակներին պատկանող կոթողային հուշարձաններ են հայտնաբերվել Հարժիս, Շինուհայր, Սվարանց, Տանձատափ, Խնածախ, Կոռնիձոր, Տեղ, Խոզնավար բնակավայրերից: Հայտնաբերված հուշարձանները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ **քանդակներ ու քանդակազարդ քարակոթողներ, մենհիրներ և ֆալոսներ**:

**Քանդակներ ու քանդակազարդ քարակոթողների** թվին են պատկանում Հարժիսից հայտնաբերված գլանաձև ելուստի վրա պատկերված մարդկային դեմքը (պահվում է Հայաստանի պատմության թանգարանում) և գլխաքանդակը (պահվում է Կապանի երկրագիտական թանգարանում): Ըստ Ա. Գնունու, Հ. Ավետիսյանի, Ա. Բոբոխյանի և Գ. Սարգսյանի՝ այս քանդակները ֆալիկ կոթողներ են և արդյունք են ֆալոսի պաշտամունքի զարգացման[1]: Այս քանդակների ի հայտ գալը ինքնին վկայում է

* Հոդվածը ներկայացվել է 20.11.2019 թ., գրախոսվել՝ 15.12.2019 թ., տպագրության ընդունվել՝ 20.12.2019 թ.:

[1] Տե՛ս **Ավետիսյան Հ.**, **Գնունի Ա.**, **Բոբոխյան Ա.**, **Սարգսյան Գ.**, Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Հնագիտական հետազոտություններ, Երևան, 2015, էջ 52:

անթրոպոմորֆ աստծու պաշտամունքի ձևավորման մասին[1], որը, մեր կարծիքով, պայմանավորված էր հասարակության մեջ տղամարդու դերի մեծացմամբ և հայրիշխանության ամրապնդմամբ[2]:

Հարժիսից հայտնաբերվել է ուշ բրոնզի դարաշրջանին պատկանող մեկ այլ մարդակերպ կուռք[3] (պահպանվում է Գորիսի երկրագիտական թանգարանում), որը, սակայն, իր կերտմամբ տարբերվում է այս ժամանակաշրջանի մյուս քանդակներից: Արձանը հնգադեմ է և ունի 76 սմ բարձրություն: Վարպետը համադրել է փորագրման և հարթաքանդակի տեխնիկան: Դեմքերը գրեթե միակերպ են: Գլխի վերին մասը հարթ է, աչքերը և բերանը փոս ընկած են (հավանաբար այլ քարից կամ նյութից ագուցվող աչքեր է ունեցել): Ագուցման եղանակը խորթ չէր հայկական լեռնաշխարհի կերպարվեստին: Հետագայում այս եղանակը լայն կիրառություն ուներ Վանի թագավորության մեջ և հելլենիստական դարաշրջանի Հայաստանում: Քիթը և ճակատը, ընդհակառակը, դուրս ընկած են: Արձանը հավանաբար տեղադրված է եղել պաշտամունքային տաճարի կենտրոնում: Հարժիսից հայտնաբերվել են պաշտամունքային նշանակություն ունեցող կուռքերի այլ դիմաքանդակներ ևս: Հնգադեմ կուռքի արձանը որոշ աղերսներ ունի Նավուրի քառադեմ արձանի հետ[4]:

Դժվար է ասել, թե կուռքն ինչ աստվածության է նվիրված եղել: Սակայն, մեր կարծիքով, հավանաբար այս կուռքի պաշտամունքը ոչ միայն տարածաշրջանային նշանակություն է ունեցել, այլ նրա պաշտամունքային արմատները հասնում են հնդեվրոպական միասնականության շրջան: Այդ մասին են

---

[1] Տե՛ս **Գնունի Ա.**, Հայկական լեռնաշխարհի ֆալիկ հուշարձանների տիպերն ու ծիսական գործառույթները, ԲԵՀ 2, 2004, էջ 129-130:

[2] Հայկական լեռնաշխարհում հայրիշխանությունը ձևավորվել է էնեոլիթի վերջում, վաղ բրոնզի դարի սկզբին (մ.թ.ա. IV հազարամյակի վերջ, III հազարամյակի սկիզբ):

[3] Տե՛ս **Ավետիսյան Հ.**, **Գնունի Ա.**, **Բոբոխյան Ա.**, **Սարգսյան Գ.**, Բրոնզերկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, էջ 52:

[4] Տե՛ս **Եսայան Ս.**, Հայաստանի ուշբրոնզեդարյան քանդակագործությունը, ԼՀԳ, Երևան, 1969, № 12, էջ 44:

վկայում տարբեր ժամանակաշրջաններին պատկանող հնդկական (Բրահմայի քառադեմ, Շիվայի հնգադեմ արձանները), հունական (Հեկատե աստվածուհու եռակերպար արձանները) սլավոնական (Ռյազանի[1] և Զբրուչի[2] քառադեմ, Չեխիայից քառադեմ, Խորվաթիայից եռադեմ[3] արձանները և այլն) կուռքերը, որոնց հիմքում ևս ընկած էր այս աստվածության նկատմամբ հավատը:

Կուռքն արտացոլում է մարդկանց աշխարհի ու կոսմոգոնիայի մասին պատկերացումները:

Մեկ այլ՝ մարդանման կուռք է հայտնաբերվել Կոռնիձոր գյուղի Շուռնուխի խաչեր տեղամասից, որը աչքի է ընկնում գլանաձև իրանով և հորիզոնական տարածված թևերով: Երևում է նաև գլուխը իրանին միացնող վիզը: Գլխամասի հարթ մակերեսի վրա նշմարվում են աչքի, քթի, բերանի նշաններ[4]: Արձանը գտնվել է դամբարանաթմբի վրա: Մեր կարծիքով՝ այն կարող է նաև մահարձան լինել և կապված լինել թաղման ծեսի հետ:

Կոթողային հուշարձանների մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Խնածախ գյուղի Խաչքարի խութ տեղամասում գտնվող խաչքարացված կոթողը և Խոզնավար գյուղի Բազարխանա վայրի կուռք-խաչքարերը:

Խնածախ գյուղի խաչքարացված քարակոթողի հետին հատվածում առկա է գոռելիեֆ պատկեր, որը բարձրանում է մինչև քարի գագաթը: Ա. Գնունու, Հ. Ավետիսյանի, Ա. Բոբոխյանի և Գ. Սարգսյանի կարծիքով՝ խաչքարն ավելի վաղ կոթողի երկրորդային օգտագործման արդյունք է[5]: Նույնը

---

[1] Տե՛ս «Советская археология», Москва, 1989, № 2, стр 93:

[2] Տե՛ս **Русанова И.**, **Тимощук Б.**, Збручское святилище (предварительное сообщение), «Советская археология», Москва, 1986. № 4, с. 90-99:

[3] Տե՛ս **Čausidis N.**, Poganska religija Slavena u svjetlu ranosrednjovjekovnih materijalnih nalaza sa područja Balkana, Histria Antiqua, vol. 13, Pula 2005, p. 446:

[4] Տե՛ս **Ավետիսյան Հ.**, **Գնունի Ա.**, **Բոբոխյան Ա.**, **Սարգսյան Գ.**, Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, էջ 134:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 54:

կարելի է ասել նաև Խոզնավարից հայտնաբերված կուռք-խաչքարի մասին:

**Մենհիրներ:** Մ.թ.ա. III-I հազարամյակներին պատկանող կոթողային հուշարձանների մեջ կարևոր տեղ են զբաղեցնում մենհիրները: Մենհիրներ են հայտնաբերվել Խնածախից՝ Բհավեր վանքից ոչ հեռու, Հարժիսից, Հարժիս-Դարաբաս հատվածից, Տանձավերից և Որոտանից: Այդ մենհիրները կարելի է բաժանել երեք խմբի՝ **նվազագույն միջամտությամբ** (Հարժիս N 6-8, 10, Տանձավեր, Որոտան), **միջին մակարդակի միջամտությամբ** (Հարժիս N 1-5, 9, 11, 12, 14) , **առավելագույն միջամտությամբ** (Հարժիս N 15) [1]:

Մեր կարծիքով՝ մենհիրները մահարձաններ էին: Սրանց կանգնեցման պատճառը կապված է եղել թաղման ծեսի և հանդերձյալ աշխարհի մասին հայերի պատկերացումների հետ: Հին հայերը հավատում էին, որ հոգին մարմնից հեռանալուց հետո քար է դառնում: Այս հավատալիքի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ավանդազրույցում: Մովսես Խորենացին, ներկայացնելով Շամիրամի մահը, ասում է. «Շամիրամը Նիոբէից առաջ քար դարձաւ»[2]:

Այսպիսի պատկերացում ունեին նաև Հին աշխարհի շատ ժողովուրդներ: Օրինակ՝ հին հունական Նիոբեի մասին առասպելում Նիոբեն, կորցնելով իր զավակներին, սարսափից ու վշտից քար է դառնում[3]:

Հետագայում, սակայն, այս հավատալիքի կատարելագործման արդյունքում մենհիրներին փոխարինելու են գալիս մահարձանները: Հենց այս պատկերացման հետ է կապված նաև կուրոսների՝ որպես մահարձաններ կանգնեցնելը[4]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 31:

[12] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ **Մ. Աբեղեան** և Ս. **Յարութիւնեան**, Տփխիս, 1913, էջ 56:

[3] Տե՛ս **Հոմերոս**, Իլիական, XXIV, 602—617, Երևան, 1987, էջ 459-460:

[4] Տե՛ս **Краснова О.**, Энциклопедия искусства Древнего мираб, ОЛМА-ПРЕСС, Москва, 2002, с. 210:

Նման պատկերացումներ ունեին նաև հին եգիպտացիները: Նրանք հավատում էին, որ մահից հետո **Կան** դուրս էր գալիս մարմնից և կարող էր ազատորեն շարժվել, սակայն նրանք փնտրում էին ֆիզիկական մնացուկներ (օրինակ՝ արձան) վերադառնալու համար[1]: Մահարձաններն ասես փոխարինում էին քայքայման ենթակա մարմնին, որպեսզի հոգին կարողանա վերադառնալ և միանալ նմանակին:

Փաստորեն կարելի է ասել, որ մենհիրը հավանաբար ևս ծառայել է որպես ֆիզիկական մարմին վերադառնալու համար:

Հոգու վերածննդի գաղափարն է արտահայտում կծկված դիրքով (խորհրդանշում է սաղմի դիրքը) կացարանի տակ թաղումները: Այդպիսի թաղումները տարածված էին Սյունիքում մ. թ. ա. IV-I հազարամյակներում[2]:

Ինչ վերաբերում է որոշ մենհիրների, որոնց մոտ դամբարաններ չեն հայտնաբերվել, պետք է ասենք, որ սրանք հավանաբար ժամանակի ընթացքում տեղաշարժվել կամ ենթարկվել են երկրորդական օգտագործման:

Գորիսի տարածաշրջանից հայտնաբերված որոշ մենհիրներ առանձնանում են՝ կոթողի վերնամասում կամ միջնամասում անցքեր ունենալով: Հենց այս անցքերի գոյությունն էլ պատճառ է դարձել մենհիրների և դրանց վրա արված անցքերի նշանակության հարցի շուրջ միակարծության բացակայության: Տեսակետներից մեկի համաձայն՝ այդ անցքերը քարը քաշելու համար են նախատեսված եղել[3]: Մեր կարծիքով՝ սրանք այլ նշանակություն են ունեցել, քանի որ կան մենհիրներ, որոնց վրա անցքերը բացակայում են: Ե. Լալայանի պնդմամբ՝ այս

---

[1] Տե՛ս **Уайт Д.**, Боги и люди Древнего Египта, Москва, 2007, с. 189.

[2] Տե՛ս **Խնկիկյան Օ.**, Սյունիքի մ. թ. ա. IV-I հազարամյակի թաղման ծեսի մեկնության փորձ, ԲԵՀ 3 (81), Երևան, 1993 , էջ 126-137:

[3] Տե՛ս **Лисициан С.,** Кошун-Дашское мегалитическое городище в Сисиане (Зангезуре). Сборник памяти академика. **Марра Н. Я.**, Москва-Ленинград, 1938, с. 709-721, տե՛ս նաև **Ավետիսյան Հ.**, **Գնունի Ա.**, **Բոբոխյան Ա.**, **Սարգսյան Գ.**, Դիտողություններ Սյունիքում մ.թ.ա. III–I հազարամյակների ծիսական լանդշաֆտի ձևավորման վերաբերյալ, Անտառ ծննդոց, հոդվածների ժողովածու նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսյանի հիշատակին, Երևան, 2015, էջ 70:

անցքերը ծիսական նշանակություն են ունեցել և կապված են եղել կնոջ, պտղաբերության պաշտամունքի հետ[1]: Մենք համաձայն ենք Ռ. Ֆրիտչենի այն տեսակետի հետ, որ դրանք կապված են թաղման ծեսի հետ և նախատեսված էին մեռածի բարեկամների աղոթքները մեռածին տեղ հասցնելու համար[2]:

**Ֆալոսներ:** Հայկական լեռնաշխարհում տարածված է եղել նաև ֆալոսի պաշտամունքը: Ֆալոսի պաշտամունքի հետքեր՝ քարից շինված ֆալոսներ են հայտնաբերվել նաև Գորիսի տարածաշրջանից, որոնք բրոնզ-երկաթեդարյան հուշարձանների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում: Դրանցից երկուսը պահպանվում են Գորիսի երկրագիտական թանգարանում: Այդ ֆալոսների գլխիկը գմբեթաձև է, իրանը՝ գլանաձև, դեպի ներքև լայնացող: Դրանցից մեկի վրա անցք կա, որը կարող է կապված լինել պտղաբերության ծիսական արարողության հետ: Ս. Եսայանի կարծիքով՝ նմանատիպ անցքերը կարող են կապված լինել կտեիսի պաշտամունքի հետ[3]:

Ֆալիկ կոթողների թվին է պատկանում նաև Շինուհայրի Խաչեր գերեզմանոցից հայտնաբերված խաչքար-կոթողը[4], որը երկրորդական մշակման արդյունք է:

Ֆալոսների պաշտամունքային նշանակությունը հիմնականում կապված է եղել պտղաբերության և բեղմնավորման, կյանքի, տոհմի, ցեղի շարունակության հետ: Ֆալոսը՝ որպես պտղաբերության խորհրդանիշ, հայտնի էր շատ ժողովուրդներին՝ հին եգիպտացիներին (կապված էր պտղաբերության աստված Մինի հետ), հին հնդիկներին (լինգամ՝ որպես սերունդ ստեղծող խորհրդանիշ, հետագայում այն կապվեց Շիվայի պաշտամունքի հետ), հին հույներին (կապված էր

---

[1] Տե՛ս **Լալայեան Ե.,** Բորչալուի գաւառ, ԱՀ, ութերորդ տարի, X գիրք, Թիֆլիս, 1903, էջ 181:

[2] Տե՛ս **Տէր-Մովսիսեան Մ.**, Յոդուածների ժողովածու, Արարատի ժառանգությունը, Է, Ս. Էջմիածին, 2009, էջ 611:

[3] Տե՛ս **Есаян С.**, Скульптура Древней Армении, Ереван, 1981, с. 51.

[4] Տե՛ս **Ավետիսյան Հ.**, **Գնունի Ա.**, **Բոբոխյան Ա.**, **Սարգսյան Գ.**, Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, էջ 136:

Հերմեսի, Դիոնիսոսի և պտղաբերության աստված Պրիապուսի հետ), հին հռոմեացիներին և այլոց:

Այս պաշտամունքը խորն արմատներ ուներ նաև հայերի շրջանում: Դրա վերապրուկները հետագայում ևս պահպանվեցին: Ս. Լիսիցյանը վկայում է, որ Սիսիանից 4-5 կմ հեռավորությամբ՝ դեպի Գորիս տանող խճուղու վրա, կա դուրս ցցված մի ծիսական քար՝ պորտաքար, որը, ըստ հայերի մեջ տարածված հավատալիքի, կարող էր բուժել չբեր կանանց: Այն եղել է ֆալոս, որը, սակայն, ծիսակատարությունների՝ կանանց պորտի վրա պառկելու և շուռումուռ գալու արդյունքում վնասվել է:[1]

Այսպիսով՝ Գորիսի տարածաշրջանի մ.թ.ա. III-I հազարամյակներին պատկանող կոթողային հուշարձանները Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթի արգասիք են, որոնք, սակայն, միևնույն ժամանակ երևան են բերում տեղական առանձին գծեր:

[1] Տե՛ս **Լիսիցյան Ս.**, Զանգեզուրի հայերը, Ե., 1969, էջ 285:

# ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ Մ.Թ.Ա. III-I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ԿՈԹՈՂԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԾԻՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

## ԱՄՓՈՓՈՒՄ

ՆՈՆՆԱ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Հոդվածում ներկայացված են Գորիսի տարածաշրջանի մ.թ.ա. III-I հազարամյակներին պատկանող կոթողային հուշարձանները և դրանց ծիսական, պաշտամունքային նշանակությունը: Կոթողային հուշարձանները, որոնք հայտնաբերվել են Հարժիս, Շինուհայր, Սվարանց, Տանձատափ, Խնածախ, Կոռնիձոր, Տեղ, Խոզնավար բնակավայրերից, աշխատանքում պայմանականորեն բաժանված են երեք խմբի՝ քանդակներ ու քանդակազարդ քարակոթողներ, մենհիրներ և ֆալոսներ: Հոդվածում դրանք քննվում են առանձին-առանձին:

**Բանալի բառեր** - կոթողային հուշարձաններ, քանդակներ, քանդակազարդ քարակոթողներ, մենհիրներ, ֆալոսներ, ծիսական նշանակություն:

# МОНУМЕНТАЛЬНЫЕ ПАМЯТНИКИ III-I ТЫСЯЧЕЛЕТИЙ ДО Н. Э. ГОРИССКОГО РЕГИОНА И ИХ РИТУАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ

## РЕЗЮМЕ

НОННА АЛАВЕРДЯН

В настоящей статье представлены примеры монументальных памятников III-I тысячелетий до н.э. в Горисском регионе и осуществлен анализ их ритуального значения. Монументальные памятники, обнаруженные в населенных пунктах Аржис, Шинуайр, Сваранц, Тандзатап, Хнацах, Корнидзор, Тех, Хознавар, в данной работе условно разделены на три группы: скульптуры и скульптурная резьба по камню, менгиры и фаллосы. В статье указанные группы исследуются отдельно.

**Ключевые слова:** монументальные памятники, скульптуры, скульптурная резьба по камню, менгиры, фаллосы, ритуальное значение.

# MONUMENTS OF THE GORIS REGION AND THEIR RITUAL SIGNIFICANCEDATING BACK TO III-I MILLENNIUM BC

## SUMMARY

NONNA ALAVERDYAN

The article refers to the monumentsof Goris Regiondating back to III-I millennium BC and their ritual and cult significance. In this work the monuments, discovered in the settlements Harjis, Shinuhayr, Svarants, Tandzatap, Khnatsakh, Kornidzor, Tegh, Khoznavar, are conventionally divided into three groups: sculptures and sculpture-ornamented monuments, menhirs andphalluses.They are examined separately in the article.

**Key words:** monuments, sculptures, sculpture-ornamented monuments, menhirs, phalluses, ritualsignificance.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Սարգսյան Գ.,** Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Հնագիտական հետազոտություններ, Երևան, 2015, 230 էջ:
2. **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Սարգսյան Գ.**, Դիտողություններ Սյունիքում մ.թ.ա. III–I հազարամյակների ծիսական լանդշաֆտի ձևավորման վերաբերյալ, Անտառ ծննդոց, հոդվածների ժողովածու նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսյանի հիշատակին, Երևան, 2015, էջ 64-78:
3. **Գնունի Ա.,** Հայկական լեռնաշխարհի ֆալիկ հուշարձանների տիպերն ու ծիսական գործառույթները, ԲԵՀ, Երևան, 2004, № 2, էջ 122-130:
4. **Եսայան Ս.**, Հայաստանի ուշբրոնզեդարյան քանդակագործությունը, ԼՀԳ, Երևան, 1969, № 12, էջ 45-54.:
5. **Լալայեան Ե.** Բորչալուի գաւառ, ԱՀ, ութերորդ տարի, X գիրք, 1903, էջ 113-203:
6. **Լիսիցյան Ս.,** Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, 336 էջ:
7. **Խնկիկյան Օ.,** Սյունիքի մ. թ. ա. IV-I հազարամյակի թաղման ծեսի մեկնության փորձ, ԲԵՀ, Երևան, № 3, 1993, էջ 126-137:
8. **Հոմերոս,** Իլիական, XXIV, 602-617, Երևան, 1987, 500 էջ:
9. **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխատասիրութ եամբ **Մ. Աբեղեան** և **Ս.**
   **Յարութիւնեան**, Տփխիս, 1913, 396 էջ:
10. **Տէր-Մովսիսեան Մ.**, Յօդուածների ժողովածու, Արարատի ժառանգութիւնը, Է, Ս. Էջմիածին, 2009, 728 էջ:
11. **Есаян С.,** Скульптура Древней Армении, Ереван, 1981, 76 с.
12. **Краснова О.**, Энциклопедия искусства Древнего мира, Москва, 2002, 352 с.
13. **Лисициан С. Д.,** Кошун-Дашское мегалитическое городище в Сисиане (Зангезуре), Сборник памяти академика Н. Я. Марра, Москва-Ленинград, 1938, с. 709-721.

14. **Русанова И., Тимощук Б.,** Збручское святилище (предварительное сообщение), «Советская археологиятѣ, Москва, 1986, № 4, с. 90-99.
15. «Советская археологиятѣ, Москва, 1989, № 2, 304 с.
16. **Уайт Д.**, Боги и люди Древнего Египта, Москва, 2007, 249 с.:
17. **Čausidis N.**, Poganska religija Slavena u svjetlu ranosrednjovjekovnih materijalnih nalaza sa područja Balkana, Histria Antiqua, vol. 13, Pula 2005, pp. 437-456.